

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԷԴՎԱՐԴԻ

ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԺԳ. 00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա»
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Իգոր Կարապետի Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա Հարությունի Գյուլամիրյան

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Անահիտ Պետրոսի Առնաուդյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. հոկտեմբերի 30-ին ժամը 12⁰⁰-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ.-ի սեպտեմբերի 19- ին:

Մանկավարժության 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝



Թերեզա Յուրիի Ազատյան

Հետազոտության արդիականությունը. Հումանիտար կողմնորոշման անգլերենի դասընթացի շրջանակներում գեղարվեստական տեքստի շուրջ աշխատանքն անհրաժեշտ է դիտարկել թե՛ տեսական, թե՛ գործնական հարթության վրա:

Տեսական մակարդակում ուսանողները ձեռք են բերում բանասիրական, լեզվաբանական, գրականագիտական, ոճաբանական վերլուծության կարողություններ և հմտություններ:

Գործնական մակարդակում ուսանողները տարբեր բնույթի խնդիրներ են լուծում: Նրանք յուրացնում են օտար լեզվով տեքստը վերլուծելու, նրա բառապաշարը ներկայացնելու մեթոդներն ու հնարները, որն ունի ոչ միայն մասնագիտական, այլև հաղորդակցական ուղղվածություն:

Ուսանողները բանասիրական վերլուծության միջոցով տարբեր խնդիրներ են լուծում՝ գնահատում են տվյալ տեքստի արժեքը, բացահայտում են դրա լեզվաբանական, գրականագիտական, ոճաբանական առանձնահատկությունները: Դա նշանակում է, որ նրանք պիտի կարողանան հստակորեն ներկայացնել տվյալ տեքստում տեղ գտած լեզվաարտահայտյամիջոցները լեզվաբանական, բանասիրական վերլուծության շրջանակներում:

Բանասիրական կողմնորոշման անգլերենի դասընթացում ուսանողները պետք է կարողանան որոշել ուսումնասիրվող տեքստի հիմնական գաղափարը, նրա հիմնախնդիրը, կատարել կառուցվածքային վերլուծություն, բացահայտել նրա ոճական և գործառական, գործաբանական առանձնահատկությունները:

Անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել տեքստի վերլուծության ուսուցման նպատակը, խնդիրները հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից:

Ապագա բանասերները պիտի շեշտը դնեն ոչ միայն օտարալեզու մասնագիտական տեքստը ընթերցելու, հասկանալու, ներկայացնելու, թարգմանելու, գեղարվեստական, բանասիրական, ոճաբանական մակարդակներում վերլուծելու, այլև նրա միջոցով անգլերենի բառապաշարը, քերականությունը, հնչյունական համակարգը յուրացնելու վրա:

Կարևոր խնդիր է նաև այն, թե համապատասխան դասընթացներում ինչ տեքստեր են ընտրվում, ինչ ընթացակարգերով են վերլուծվում: Ընթերցման, թարգմանության, հասկանալու, վերարտադրելու բոլոր ընթացակարգերն անհրաժեշտ է հիմնավորել ըստ ընտրված դասընթացի հիմնական նպատակի և խնդիրների:

Տեքստի վերլուծության տարբեր հայեցակերպեր են ներկայացվել Ա. Ռ. Ապրեսյանի (2001), Պ.Բ. Բալայանի (2001), Գ. Լ. Դանիելյանի (2008), Լ. Եգեկյանի (2007), Ֆ. Հ. Խլղաթյանի (2000) աշխատանքներում: Ա. Նորդը (С. Nord 2005), Մ. Ա. Կունիլովսկայան (М.А. Куниловская 2013), Օ. Բ. Անիկինան (О. Б. Аникина 2010) Մ. Պ. Բրանդեսը (М. П. Брандес 1998) քննության են առել տեքստի նախաթարգմանական վերլուծության առանձնահատկությունները, իսկ Ն. Մ. Շանսկին (Н.М. Шанский 1990), Լ. Յ. Մաքսիմովը (Л.Ю. Максимов 1993), Գ. Գ. Գրանիկը և Լ. Ա. Շապովալը (Г. Г. Граник, Л. А. Шаповал 2000), Լ. Գ. Բարենկոն, Ի. Ե. Վասիլևը, Յ. Բ. Կազարինը (Л.Г. Бабенко, И. Е. Васильев, Ю. В. Казарин 2000) ներկայացրել են տեքստի լեզվաբանական վերլուծության ընթացակարգերը:

Ս. Լ. Կազանովիչը (С.Л. Каганович 2006) մշակել է պոետական տեքստի վերլուծության ուսուցման տեխնոլոգիան, իսկ Վ. Գ. Մարանցմանը (В. Г. Маранцман 1988) և Ա. Վ. Գասպարյանը (А.В. Гаспарян 2017) ներկայացրել են գեղարվեստական տեքստի մեկնաբանությունը որպես ուսուցման տեխնոլոգիա: Գ. Յ. Սոլգանիկը (Г.Я. Солганик 1997) և Մ. Ն. Կոժինան (Кожина 2014) հետազոտել են տեքստի ոճաբանությունը, իսկ Լ. Վ. Յուրիկովան՝ (Л. В. Цурикова 2001), Յ. Օստմանը և Տ. Վիրտանեն (J. Ostman, T. Virtanen 1995) խոսույթի վերլուծության ճանաչողական հիմնախնդիրները: Բհատիան (V. K. Bhatia 1993) Ն.Վ. Լեյդերմանը (Лейдерман 2009) հետազոտության առարկա է դարձրել տեքստի ժանրային, իսկ Յ. Պ. Գին (J. P. Gee 2005), Վ. Ֆ. Հանկսը (W. F. Hanks 1987), Տեն Ա. Վան Դիյկը (Teun A. van Dijk 1997), Ռ. Ե. Լոնգացրը (R. E. Longacre 1996)՝ խոսույթի քերականությունը, Ս. Օպարան (S. C. Opara 2005)՝ խոսքի խոսութային-ոճաբանական վերլուծության հիմնախնդիրը:

Գեղարվեստական տեքստի վերլուծության կարևորագույն մաս է կազմում տեքստի կառուցվածքային-իմաստային բաժանումը: Ինչպես հայտնի է տեքստի հիմնական հատկանիշներին է վերաբերում մտահղացման ամբողջականությունը՝ կապը և բաղադրամասերի կապակցելիությունը:

Բառային, ձևաբանական, շարահյուսական, հնչյունաբանական մակարդակներում գեղարվեստական տեքստի վերլուծությունը համարվում է տեքստի հետ աշխատանքի ավանդական ձև, որը կարող է լինել արդյունավետ ժամանակակից մոտեցումների համալիր կիրառմամբ:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել հումանիտար կողմնորոշման անզլերենի դասընթացներում գեղարվեստական տեքստի շուրջ աշխատանքի առանձնահատկությունները և մշակել օտարալեզու մասնագիտական

կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգ:

Հետազոտության վարկածը

Եթե հումանիտար կողմնորոշման անգլերենի դասընթացում կիրառվեն օտարալեզու տեքստերի վերլուծության ուսուցման անձնակողմնորոշիչ, անձնուղորդ, նմանակման, ոչ խաղային և խաղային, հաղորդակցական ուսուցման, տարբերակված ուսուցման, ուսուցման մոդուլային, քննադատական մտածողության զարգացման, ինչպես նաև տեքստի թարգմանության և վերլուծության (rule-based՝ կանոնների վրա հիմնված, statistics-based՝ վիճակագրական, model-based՝ կաղապարների վրա հիմնված) ժամանակակից տեխնոլոգիաները, ապա կձևավորվեն ուսանողների մոտ ոչ միայն տեքստի վերլուծության լեզվաբանական կարողություններ, այլև ավելի բարձր մասնագիտական ռեֆլեքսիվ մակարդակում կզարգանան նրանց հաղորդակցական կարողունակությունները:

Հետազոտության օբյեկտը անգլերենի ուսուցումն է բանասիրական կողմնորոշման անգլերենի դասընթացում (English for the Humanities):

Հետազոտության առարկան է օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգը:

Հետազոտության առաջադիր խնդիրները.

- Ուսումնասիրել օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման լեզվաբանական, գրականագիտական և մեթոդական գրականություն:
- Ներկայացնել օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման մանկավարժական, հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաները:
- Մշակել մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգ, որը նպաստում է գեղարվեստական տեքստերի վերլուծական կարողությունների ձևավորմանը հաղորդակցական իրազեկության զարգացման գործընթացում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են տեքստի և խոսույթի վերլուծության և ուսուցման կառուցվածքային-համակարգային (Լ. Եզեկյան, Ֆ. Հ. Խլիաթյան և այլոք), ճանաչողական-հաղորդակցական (Է.Յ. Կլյուե, Ն.Տ. Բոլոտնովա, (Կորնիլով Օ.Ա., Կյոբրյակովա Է.Տ., Լյուրիկովա Ս. Վ., Յ. Davey և այլոք), լեզվամշակութաբանական (Ք.Կ.Բոջենկովա, Բ.Մ. Եսաջանյան,

R. Bauman և այլոք), տեխնոլոգիական (С.Л. Каганович, В.Г. Маранцман և այլոք) տեսությունները:

Հետազոտության գիտական նորոյթն այն է, որ

1. բացահայտվել են անգլերեն գեղարվեստական տեքստի վերլուծության ուսուցման առանձնահատկությունները բանասիրական վերլուծության մակարդակներում,
2. դասակարգվել են գեղարվեստական տեքստի վերլուծության մեթոդական մոտեցումներն ու հայեցակարգերը,
3. մշակվել է օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման անձնակենտրոն, ոչ խաղային և խաղային, հաղորդակցական, մոդուլային, քննադատական մտածողության զարգացման ինչպես նաև տեքստի թարգմանության և վերլուծության (կանոնների վրա հիմնված, վիճակագրական, հիբրիդ, կադապարահեն) ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգ:

Հետազոտության տեսական նշանակությունը.

Ուսումնասիրվել և համակարգվել են օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստի վերլուծության, ինչպես նաև ուսուցման հիմնական տեսությունները, բացահայտվել են մասնագիտական, մասնագիտական կամ հումանիտար կողմնորոշման դասընթացների նպատակն ու խնդիրները, ստեղծվել է օտարալեզու մասնագիտական կողմնորոշման տեքստերի վերլուծության ուսուցման մեթոդական համակարգ:

Հետազոտության գործնական նշանակությունը. մշակվել է ուսումնական, մասնագիտական կողմնորոշման գեղարվեստական տեքստի ընտրության, վերլուծության ուսուցման վարժությունների համակարգ, ուսանողների դրդապատճառների, հետաքրքրությունների, պահանջմունքների բացահայտման հարցաշարեր, դասագրքերի, տեքստերի և վարժությունների վերլուծության և գնահատման չափանիշներ, որոնք կարող են նպաստել անգլերեն նոր դասընթացների կազմակերպմանը, դասագրքերի, ձեռնարկների ստեղծմանը, կոնկրետ ծրագրերի կազմմանը, դասերի պլանավորմանն ու իրականացմանը:

Հետազոտության փորձարարական բազա է հանդիսացել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը:

Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2011 - 2012 թթ.) որոշվել է հետազոտության թեման, առաջադրվել է նախական վարկածը, հստակեցվել է հետազոտության հասկացական ապարատը:

Երկրորդ փուլում (2012 - 2014 թթ.) վերլուծվել են բանասիրական ֆակուլտետում կիրառվող դասագրքերը, որոշվել են փորձարարական և ստուգողական խմբերը, իրականացվել է հաստատող գիտափորձ:

Երրորդ փուլում (2014 - 2015 թթ.) իրականացվել է ստուգողական և ձևավորող գիտափորձ, ստեղծվել է տեքստի վերլուծության ուսուցման օրինակելի, արդյունավետ կաղապար, որի արդյունավետությունը հիմնավորվել է համապատասխան փորձարարական ուսուցմամբ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Ուսուցողական նպատակներով տեքստի վերլուծությունը և մեկնաբանությունը նպաստում է ոչ միայն բանասիրական եզրույթների և հասկացությունների թարգմանությանը և ուսուցմանը, այլև դրանց համաժամանակյա, ինտեգրված ուսուցմանը և յուրացմանը, ինչպես նաև խոսքային կարողությունների զարգացմանը:

2. Օտարալեզու տեքստի բանասիրական վերլուծությունը զարգացնում է ուսանողների քննադատական, ստեղծագործական մտածողությունը: Այն ներկայացնում է յուրահատուկ ստեղծագործական գործընթաց, որը նպաստում է անզլալեզու հեղինակների, ընդհանրապես լեզվակիրների մենթալ հիմքերն ուսումնասիրելուն, հենքային գիտելիքները շարունակաբար խորացնելուն և ընդլայնելուն:

3. Օտարալեզու գեղարվեստական տեքստի վերլուծության ուսուցումը կարող է շարունակաբար բարելավվել, եթե կիրառվում են ուսուցման անձնակենտրոն, անձնուղղորդ, ոչ խաղային և խաղային, հաղորդակցական, տարբերակված, մոդուլային, քննադատական մտածողության զարգացման, ինչպես նաև տեքստի թարգմանության և վերլուծության փոխներգործուն տեխնոլոգիաներ: Դրանց համալիր կիրառումն արդյունավետ է ինչպես տեքստի նախաթարգմանական վերլուծության, այնպես էլ արտադրողական խոսքային կարողությանների ձևավորման և զարգացման փուլերում:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովվում է օտարալեզու տեքստի վերլուծության և վերլուծության ուսուցման լեզվաբանական, գրականագիտական, ոճաբանական, լեզվադիդակտիկական, մեթոդական տեսությունների և հայեցակարգերի ուսումնասիրությամբ, հետազոտության մեթոդաբանական հիմքերի հստակեցմամբ, տեքստի վերլուծության

ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ, փորձարարական ուսուցման վերջնարդյունքների հավաստիությամբ, ներկայացված կադապարի արդյունավետությամբ:

Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է ԵՊՀ –ի անգլերենի թիվ 1, 2 ամբիոնների նիստերում, հրատարակված գիտական հոդվածներում, գիտափորձի բազա հանդիսացած ուսումնական հաստատությունների համապատասխան ֆակուլտետներում: Հետազոտության արդյունքները ներդրվել են ԵՊՀ-ի բանասիրական, լրագրության ֆակուլտետներում:

Տպագրված աշխատանքները: Ատենախոսության թեմայով տպագրված են 6 գիտական աշխատանք, որոնց ցուցակը բերված է սեղմագրի վերջում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 150 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտն, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Առաջին **«Տեքստի վերլուծության հիմնախնդիրը հումանիտար կողմնորոշման անգլերենի բուհական դասընթացում»** գլխում ներկայացվում է անգլերենի հումանիտար կողմնորոշման բուհական դասընթացը, նրա նպատակը, խնդիրները, տեքստի նախաթարգմանական, ոճաբանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաները:

«Տեքստի բանասիրական վերլուծության առանձնահատկություններն անգլերենի հումանիտար կողմնորոշման բուհական դասընթացում» ենթագլխում հանգամանորեն ներկայացվում են «գեղարվեստական տեքստ» հասկացությունը, նրա գործառույթները, լեզվաբանական վերլուծության առանձնահատկությունները ձևաբանական, շարահյուսական, հնչյունաբանական մակարդակներում:

Նշվում է, որ տեքստի վերլուծության ընթացքում և արդյունքում ուսանողները ձեռք են բերում տեսական-գրականագիտական, պատմամշակութային, գեղարվեստական-գեղագիտական, հաղորդակցական-խոսքային կարողունակություններ:

Առանձնացվում են տեքստի վերլուծության կենսագրական, պրոբլեմային-թեմատիկ, սոցիոլոգիական, լեզվաբանական, ոճաբանական, գրականագիտական մոտեցումները:

Երկրորդ **«Տեքստի նախաթարգմանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաները բանասիրական կողմնորոշման դասընթացում»** ենթագլխում ներկայացվում են այն մոտեցումները, որոնք վերաբերում են տեքստի վերլուծության տեխնոլոգիաներին և ընթացակարգերին:

Նշվում է, որ տեքստի վերլուծության /հասկանալու, թարգմանության, վերարտադրելու/ առաջին գործառնությունը /օպերացիա/ նրա ընթերցումն է: Բուն ընթերցումը հիմնականում վերլուծական է: Երկրորդ գործառնությունը տեքստի գործառական ոճը որոշելն է: Փորձը ցույց է տալիս, որ մայրենի

լեզվով այդ գործառնությունը ճիշտ կատարողները շատ արագ են յուրացնում օտար լեզվով տեքստի վերլուծության հմտությունները:

Տեքստի նախաթարգմանական վերլուծության առաջին փուլում ուսանողները նպատակ են դնում ընդհանրացնել առանձին փաստերը, կազմել տեքստի պլանը, առանձնացնել նրա իմաստային բաղադրիչները:

Հաջորդ փուլում ուսանողները փորձում են որոշել տեքստի թեման: Դրա համար նրանք որոշում են պատմվածքի առարկան, հիմնական թեմայի ձևական հատկանիշները:

Երրորդ **«Օտարալեզու տեքստի ոճաբանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաները»** ենթազխում հանգամանորեն ներկայացվում են ոճաբանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաները լեզվական տարբեր մակարդակներում: Նշվում է, որ մի կողմից՝ ոճաբանությունը հիմք է ստեղծում տարբեր ոճական հնարների, հուզաարտահայտչական միջոցների յուրացման համար, մյուս կողմից՝ ոճական միջոցների ճիշտ և տեղին օգտագործումը մասնագիտական և իրական հաղորդակցության կարևորագույն պայման է:

Երկրորդ **«Տեքստի վերլուծության ուսուցման ռազմավարությունները և մշակված կաղապարի արդյունավետության փորձարարական հիմնավորումը»** գլխում ներկայացվում են վերլուծական ընթերցանության ուսուցման տեխնոլոգիաների մանկավարժական պայմանները, գծագրական դասակարգիչների կիրառման ռազմավարությունները: Հիմնավորվում է տեքստի վերլուծության ուսուցման կաղապարի արդյունավետությունը:

Երկրորդ գլխի երկրորդ **«Վերլուծական ընթերցանության ուսուցման տեխնոլոգիաները»** ենթազխում տեքստի ընթերցանությունը ներկայացվում է վերլուծական ընթերցանության գործընթացն ըստ փուլերի: Նշվում է, որ տեքստի իմաստը հասկանալու համար միայն լեզվական գիտելիքները բավարար չեն: Հանգամանորեն ներկայացվում են տեքստի իմաստը հասկանալուն միտված ռիթմիկ, շարույթային, շարակարգային, շարահյուսական, ձևաբանական, բառային, իմաստային, ոճաբանական վերլուծության տեսակները:

Երկրորդ գլխի **«Գծագրական դասակարգիչների կիրառման ռազմավարությունները տեքստի վերլուծության ուսուցման գործընթացում»** ենթազխում հիմնավորվում է գծագրական դասակարգիչների կիրառման նպա-

տակահարմարությունը և արդյուվետությունը տեքստի վերլուծության ուսուցման գործընթացում: Համապատասխան օրինակներով ներկայացվում են այն ռազմավարությունները, որոնք պահանջում են այս կամ այն գծագրական դասակարգիչների կիրառում «It Says, I Say, And So Graphic Organizer», «Summarizing and Note-taking» և այլն: Հիմնավորվում է հատկապես «ընդհանրացման և գրառման գծագրական դասակարգիչ», «տեքստում տեղ գտած կապերի, շաղկապերի, կապակցող բառերի վերլուծության» ռազմավարության արդյունավետությունը: Նշվում է, որ կապակցող բառերի ուսուցումն իրականացվում է տարբեր մակարդակներում՝ նկարագրական, հաջորդական, համեմատական–հակադրական, պատճառահետևանքային, հիմնասխնդրի և նրա լուծման, փաստարկի և վկայակոչման, տեքստի կառուցվածքի նպատակի և կապակցող բառերի մակարդակներում:

Առաջարկվող կաղապարում հաղորդակցական-ճանաչողական մոտեցման շրջանակներում առանձնացվել «բարձրաձայն մտածիր» (It Says, I Say, And So Graphic Organizer), «ընդհանրացնել և գրառում անել» (Summarizing and Note-taking), «վերլուծել տեքստում տեղ գտած կապերը, շաղկապերը, կապակցող բառերը», «ճարտասանական հնարների շուրջ աշխատանք, հարց ու պատասխանի (Question/Answer Relationship (QAR)), «հասկանալու համար ընդգծել» (Underlining for Comprehension), «տեքստը վերլուծելու հետադարձ հայացքի» (Text Lookback) ռազմավարությունները:

Վերջին **«Տեքստի վերլուծության ուսուցման կաղապարի արդյունավետության փորձարարական հիմնավորում»** ենթագլխում ներկայացվում է փորձարարական ուսուցման գործիքակազմը, ընթացքը և արդյունքները: Նկարագրվում է առաջարկվող մեթոդիկայի արդյունավետությունը հիմնավորելու նպատակով ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի երկրորդ կուրսում իրականացված փորձարարական ուսուցման նպատակը, փուլերը, ուսանողների համակազմը, ընթացակարգերը և արդյունքները: Փորձարարական ուսուցման նպատակն է եղել հիմնավորել առաջարկվող կաղապարի արդյունավետությունը: Փորձարարական ուսուցումն իրականացվել է ԵՊՀ լրագրության և բանասիրական ֆակուլտետներում: Փորձարարական խմբում ընդգրկվել են 38 ուսանող, և ստուգողական խմբում՝ 40 ուսանող: Ուսանողների գիտելիքները գնահատվում են 20 բալանոց համակարգով:

Բառային-իմաստաբանական վերլուծության մակարդակում սովորողները բացահայտում են գեղարվեստական տեքստի գործողությունների տեղը, ժամանակը, առանցքային կերպարները, ներկայացնում են հիմնական հերոսների հուզական աշխարհը: Հաջորդ փուլում նրանք դուրս են գրում բառային միավորները, հատկապես այն միավորները, որոնք վերաբերում են հիմնական հերոսների վարքին, գործողություններին և այլն: Դրա հետ մեկտեղ, նրանք չեն մոռանում ներկայացնել երկրորդական կերպարները:

Ավարտական փուլում սովորողները ներկայացնում են օտար լեզվով ամփոփիչ ձևով տեքստի բովանդակությունը:

Լեզվաոճաբանական մակարդակում ուսանողներն առանձնացնում են տեքստում տեղ գտած արտահայտչամիջոցները՝ մակդիրները, համեմատությունները, չափազանցությունները և այլն, բացահայտում են օժանդակ գեղարվեստական միջոցները և հնարները, որոնք բնորոշում են բանաստեղծության հնչողությունը, հանգերը, վանկարկումը, հնչերանգի առանձնահատկությունները: Վերջին փուլում ճշգրտվում է տեքստի մեկնաբանությունը, ձևակերպվում է հեղինակային դիրքորոշումը և նրա վերբերմունքը այդ ստեղծագործության նկատմամբ:

Կարևորվում է հատկապես բնագրի մեկնաբանման փուլը, երբ ուսանողները որոշում են հեղինակի դիրքորոշումը, համեմատում այն իրենց դիրքորոշման հետ:

Կոնկրետ հեղինակի գործերը համեմատելուց կամ վերլուծելուց առաջ տրվում է անգլիացի բանաստեղծների հիմնական ցանկը, հետո դասախոսի կամ ուսանողների ընտրությամբ կանգ են առնում կոնկրետ բանաստեղծի, նրա կյանքի և գործունեության վրա: Միայն դրանից հետո ընտրվում են այն բանաստեղծությունները, որոնք ենթակա են համեմատական վերլուծության:

Փորձարարական աշխատանքի նախնական և ավարտական փուլերում ստուգվել են բանասիրական ֆակուլտետի ուսանողների հետևյալ կարողությունները՝

1. ճանաչել և թարգմանել մասնագիտական տերմինները, հանրամշակութային բացերը և իրակությունները,
2. համեմատել թարգմանության աղբյուր հանդիսացող և մայրենի լեզվի լեզվակաղապարները,

3. վեր հանել տեքստի տարբեր հատվածների միջև տրամաբանական, բովանդակային, թեմա-ռեմա կապերը,

4. բացատրել քերականական կառույցները և երևույթները,

5. բացահայտել բառապաշարի առանձնահատկությունները,

6. ներկայացնել տեքստի ոճական առանձնահատկությունները,

7. ներկայացնել տեքստում տեղի ունեցող իրադարձությունները ըստ հաջորդականության,

8. վերլուծել տեքստի իմաստային-կոմպոզիցիոն կամ կազմախոսական կառուցվածքը,

9. մեկնաբանել և տեքստում շարադրված փաստերի հիման վրա եզրահանգում անել,

10. մոդելավորել լեզվակիրներին բնորոշ խոսքային իրադրությունները:

Աղյուսակ 1.

Բանասիրական ֆակուլտետի ուսանողների տեքստը վերլուծելու կարողությունները

Կարողություններ	Փորձարարական խումբ, ուսանողների թիվը՝ 38		Ստուգողական խումբ, ուսանողների թիվը՝ 40	
	փորձի սկզբում	փորձի վերջում	փորձի սկզբում	փորձի վերջում
1.ճանաչել և թարգմանել...	12	17	12	15
2.համեմատել ...	13	17	12	15
3.վեր հանել տեքստի ...	13	17	12	15
4.բացատրել քերականական...	14	18	13	15
5.բացահայտել բառապաշարի...	13	18	13	15
6.ներկայացնել տեքստի...	11	16	11	14
7.ներկայացնել տեքստում...	13	18	12	16
8.վերլուծել տեքստի...	11	16	11	14
9.մեկնաբանել և ...	12	16	11	14
10.կադավարել լեզվակիրներին...	10	16	10	14

Ստուգողական և փորձարարական խմբերում ներգրավված ուսանողների առաջադիմության համեմատությունը ցույց է տալիս, որ օտարալեզու տեքստի

լեզվաբանական, բանասիրական, նախաթարգմանական կարողությունների զարգացումը հիմք է ստեղծում ուսանողների հաղորդակցական կարողությունների շարունակական զարգացման համար: Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ուսանողների առաջադիմությունը կազմում է 23.5 %, ստուգողական խմբում՝ 11 %:

Փորձարարական ուսուցման բոլոր փուլերում՝ հաստատող, ձևավորող և ստուգողական, փորձ է արվել ցույց տալ նշված կարողությունների զարգացման դինամիկան:

Ինչպես ցույց տվեց համեմատությունը, փորձարարական խմբում ներգրավված ուսանողները բոլոր նշված չափանիշներով ցույց տվեցին իրենց առավելությունը:

Փորձարարական ուսուցման ավարտական փուլում ստուգվել են ուսանողների վերլուծական կարողությունները ըստ կիրառվող տեխնոլոգիաների.

1. վերլուծել տեքստը կամ խոսույթը,
2. ներկայացնել սեփական մոտեցումը, դիրքորոշումը,
3. օգտվել ժամանակակից գիտահանրամատչելի գրականությունից
4. ընտրել և թարգմանել անգլալեզու հեղինակների կողմից ստեղծված տեքստեր,
5. առանձնացնել նոր բառեր ու արտահայտություններ,
6. կատարել համացանցային և ոչ համացանցային բազում առաջադրանքներ,
7. ստուգել առաջադրանքների կատարումը,
8. գնահատել սեփական աշխատանքի արդյունքները,
9. օգտվել կորպուսային հետազոտությունների տվյալներից,
10. իրականացնել տարբեր բնույթի հետազոտական նախագծեր:

Ուսանողների վերլուծական կարողությունները ըստ կիրառվող տեխնոլոգիաների.

Կարողություններ	Փորձարարական խումբ, ուսանողների թիվը՝ 38		Ստուգողական խումբ, ուսանողների թիվը՝ 40	
	փորձի սկզբում	փորձի վերջում	փորձի սկզբում	փորձի վերջում
1.վերլուծել տեքստը կամ խոսույթը	11	17	11	14
2.ներկայացնել սեփական մոտեցումը, դիրքորոշումը	11	17	11	14
3. օգտվել ժամանակակից գիտահանրամատչելի գրականությունից,	13	18	12	15
4. ընտրել և թարգմանել անգլալեզու հեղինակների կողմից ստեղծված տեքստեր	14	18	13	15
5.առանձնացնել նոր բառերն ու արտահայտությունները,	14	18	14	16
6.կատարել համացանցային և ոչ համացանցային առաջադրանքներ,	13	17	12	15
7.ստուգել առաջադրանքների կատարումը,	12	17	11	15
8.գնահատել սեփական աշխատանքի արդյունքները,	12	17	12	15
9. օգտվել կորպուսային հետազոտությունների տվյալներից,	10	16	10	14
10.հրականացնել տարբեր բնույթի հետազոտական նախագծեր:	12	16	11	14

Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ուսանողների առաջադիմությունը կազմում է 25 %, ստուգողական խմբում՝ 7.5 %: Ստացված տվյալները հաստատում են այն միտքը, որ մշակված մեթոդական համակարգն արդյունավետ է, քանի որ խնդիր է դրվում զարգացնել ուսանողների օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակները՝ ընկալողական, արտադրողական, ինտերակտիվ և մեդիատիվ:

Փորձարարական խմբում ընդգրկված ուսանողներն ավելի արդյունավետորեն են իրականացնում տարբեր հետազոտական, ստեղծագործական նախագծեր, քանի որ նրանց մոտ օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակները զարգացած են հավասարապես:

Փորձարարական ուսուցման վերջում արձանագրվել է ուսանողների վերլուծական հմտությունների զարգացման միտում: Դա վերաբերում է ընկալողական մակարդակում ընթերցելու և ունկնդրելու, արտադրողական մակարդակում խոսելու և գրելու, ինտերակտիվ մակարդակում մենախոսելու և երկխոսելու, մեդիատիվ մակարդակում մեկնաբանելու և թարգմանելու հմտություններին: Փորձարարական ուսուցումը ևս մեկ անգամ հաստատեց այն դրույթը, ըստ որի՝ մեդիատիվ հմտությունների զարգացումը անհրաժեշտ պայման է հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման համար:

Եզրակացություն

1. Վերլուծվող տեքստի մեկնությունը համարվում է տեքստի վերլուծության տեխնոլոգիա, որը կարելի է օգտագործել ոչ միայն վերլուծական-հետազոտական, այլև ուսուցողական նպատակներով: Օտար լեզվով գեղարվեստական տեքստի վերլուծությունը պահանջում է վերլուծական-ռեֆլեքսիվ կոմպետենցիայի շարունակական զարգացում ուսուցման բոլոր փուլերում:

2. Ընդհանուր առմամբ, տեքստի նախաթարգմանական և լեզվաբանական վերլուծության ժամանակ մենք գործ ունենք ոչ միայն ճանաչողական, այլև հուզագգայական, գնահատողական գործունեության հետ: Վերլուծական աշխատանքը կամ տեքստային գործունեությունը, գիտելիքների և կարողությունների, փորձի, զգացմունքների, նորմերի փոխանակման գործընթաց է:

3. Օտար լեզվով ոճական հնարների ուսուցումը հիմք է ստեղծում ոչ միայն անգլերեն, այլև հայերեն ոճաբանական եզրույթների, տերմինա-կապակցությունների յուրացմանը: Հումինատար կողմնորոշման անգլերենի դասընթացում խնդիր է դրվում զարգացնել սովորողների լեզվաբանական կոմպետենցիան ոչ միայն ճանաչողական, այլև վերճանաչողական մակարդակներում:

4. Փաստորեն, մի կողմից, հստակ գիտական մեթոդներով ուսանողներն ապակողավորում են տեքստը, մյուս կողմից՝ նրանք ստեղծում են նոր տեքստեր կամ վերտեքստեր: Այսինքն՝ ուսանողը հանդես է գալիս որպես հետազոտող և նրա հետազոտության արդյունքը վերտեքստ է օտար լեզվով:

5. Վերլուծական ընթերցանությունը ենթադրում է տեքստի քերականական, բառային, իմաստաբանական, ոճաբանական վերլուծություն: Այն համարվում է տեքստի թարգմանության ընթացքում լեզվական նշանների ապակողավորման գործընթաց: Մեծ նշանակություն ունի վերլուծական

ընթացանությունն ուսանողների հենքային գիտելիքների շարունակական զարգացման գործում:

6. Օտարալեզու տեքստի վերլուծության ուսուցման գործընթացը նպաստում է նրանց թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի ձևավորմանը: Այստեղ դժվար է հստակորեն, ասել, թե գիտական-մասնագիտական, թե՛ խոսակցական բառապաշարի յուրացմանը ինչպես և ինչքան է նպաստում վերլուծական ընթացանությունը, քանի որ դա պայմանավորված է նախ և առաջ տեքստերի ընտրությամբ:

7. Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մշակված մեթոդական համակարգն արդյունավետ է, քանի որ խնդիր է դրվում զարգացնել ուսանողների օտարալեզու խոսքային գործունեության բոլոր տեսակները՝ ընկալողական, արտադրողական, ինտերակտիվ և մեդիատիվ:

8. Մեդիատիվ կարողությունների և հմտությունների հետևողական զարգացումը ոչ միայն նպաստում է օգտվել ժամանակակից գիտահանրամատչելի գրականությունից, այլև ձևավորում է համապատասխան մասնագիտական դրդապատճառներ: Շատ ուսանողներ մեծ բավականությամբ են գտնում տեղեկատվական նոր աղբյուրներ, քանի որ տեքստերը վերլուծելիս ներգրավվում են յուրահատուկ ստեղծագործական-հետազոտական աշխատանքի մեջ:

9. Փորձարարական ուսուցումը ևս մեկ անգամ հաստատեց այն դրույթը, ըստ որի՝ մեդիատիվ հմտությունների զարգացումը անհրաժեշտ պայման է հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Գևորգյան Ռ.Է. Տեքստի բանասիրական վերլուծության առանձնահատկությունները հումանիտար կողմնորոշման անգլերենի բուհական դասընթացում.// ՀՀ կրթության և գիտության նախարարություն կրթության ազգային ինստիտուտ; «Օտար լեզուները Հայաստանում» գիտամեթոդական հանդես; N 1 Եր., 2013, էջ 39-47

2. Գևորգյան Ռ.Է. Վերլուծական ընթացանության հիմնախնդիրը անգլերենի հումանիտար կողմնորոշման դասընթացում.// FLSP; Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար N 1, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, (10) Եր., 2013, էջ 200-208

3. Գևորգյան Ռ.Է. Տեքստի նախաթարգմանական վերլուծության ուսուցման տեխնոլոգիաները բանասիրական կողմնորոշման անգլերենի դասընթացում.// Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» N 1-2: Զանգակ հրատարակչություն, Եր., 2014, էջ 226-233

4. Գևորգյան Ռ.Է. Տեքստի վերլուծության ուսուցման կաղապարի արդյունավետության փորձարարական հիմնավորումը.// «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական սովորողների և ուսուցիչների համար; գիտահետազոտական N 1-2, Եր., 2016, էջ 39-44

5. Գևորգյան Ռ.Է. Օտարալեզու տեքստի վերլուծության ուսուցման ռազմավարությունները.// «Բանբեր» Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի N 3 (43), «Տնտեսագետ» հրատարակչություն, մեթոդաբանություն, Եր., 2016, էջ 154-160

6. Գևորգյան Ռ.Է. Ոճաբանական վերլուծության ուսուցման հիմնախնդիրն անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում.// «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան; Ուսումնամեթոդական հոդվածներ N 1 (46), Վանաձոր, 2017, էջ 164-167

ГЕВОРГЯН РУЗАННА ЭДВАРДОВНА
ТЕХНОЛОГИИ ОБУЧЕНИЯ АНАЛИЗУ ТЕКСТА В ГУМАНИТАРНО-
ОРИЕНТИРОВАННЫХ КУРСАХ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02. «Методика преподавания и обучения» (английский язык)». Защита диссертации состоится 30.10.2020г. в 12⁰⁰ ч. на заседании специализированного совета по педагогике 020 «Педагогика» ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Проблема обучения иностранным языкам с использованием художественных текстов конкретизируется в рамках разных курсов. Анализ и обучение анализу иноязычного художественного текста развивает интеллект учащихся, их коммуникативные умения и навыки, а также лингвострановедческие, фоновые знания.

На теоретическом уровне студенты приобретают умения и навыки филологического, лингвистического, литературоведческого, стилистического анализа. На практическом уровне студенты решают разные задачи. Они усваивают лексику, которая необходима для анализа текста на иностранном языке, для презентации содержания текста, с учетом того, что она имеет не только профессиональную, но и коммуникативную направленность.

На первый план выступает проблема рассмотрения и пересмотра процедур анализа иноязычного художественного текста с точки зрения разных подходов.

Цель исследования: выявить особенности работы над художественным текстом в гуманитарно-ориентированном курсе английского языка и разработать методическую систему использования эффективных технологий обучения анализу текста.

Задачи исследования:

- Изучить лингвистическую, литературоведческую и методическую литературу по использованию художественных текстов в учебных целях.
- Представить личностно-ориентированные, игровые, коммуникативные, дифференцированные, модульные технологии, а также технологии перевода и анализа текста (основанных на правилах и моделях, статистические, гибридные и т.д.) в процессе обучения анализу профессионально-ориентированных текстов.
- Разработать методическую систему обучения анализу художественного текста, которая может способствовать формированию аналитико-рефлексивной

компетенции студентов и развитию их коммуникативной компетенции.

Научная новизна исследования.

1. выявлены особенности обучения анализу художественного текста на лингвистическом и литературоведческом уровнях;

2. проанализированы и классифицированы личностно-ориентированные, игровые, коммуникативные, дифференцированные, модульные технологии, а также технологии перевода и анализа текста, определены педагогические условия и процедуры их применения, с учетом особенностей филологически ориентированного курса обучения английскому языку;

3. разработана методическая система использования технологий обучения анализу текста.

Теоретическое значение исследования:

- Изучены и систематизированы основные теории анализа и обучения анализу текста, определены цели и задачи курсов гуманитарно-ориентированных курсов, создана методическая система обучения анализу профессионально-ориентированных текстов.

Практическое значение исследования.

- Разработана система упражнений отбора, обучения анализу художественного текста, критерии анализа и оценки профессионально-ориентированных текстов, учебников, которые могут способствовать организации новых курсов обучения английского языка, созданию новых программ учебно-методических комплексов, планированию и проведению уроков.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений. Основное содержание диссертации изложено на 150 страницах.

По теме диссертации опубликованы шесть научных статей.

GEVORGYAN RUZANNA EDVARD
TEACHING TECHNOLOGIES OF TEXT ANALYSIS IN ENGLISH COURSES FOR
THE HUMANITIES

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Teaching and learning methodology" (English).

The defense of the thesis will be held at 12⁰⁰ on 30.10. 2020 at the session of the Special Board 020 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) to award degrees under the Armenian State Pedagogical University. After Kh. Abovyan,
Address: 0010, Tigrana Mets ave. 17, 0010,

SUMMARY

The relevance of research. The problem of teaching foreign languages using literary texts is concretized within the framework of different courses. The training to analyze a foreign language literary text develops students' intellect, their communicative habits and skills, as well as linguocultural, background knowledge.

At the theoretical level, students acquire the skills of philological, linguistic, literary, stylistic analysis. At the practical level, students solve different problems. They learn vocabulary, which is necessary for analysis of a text in a foreign language, for the presentation of the text, which has not only a professional, but also a communicative orientation.

The problem of reviewing and revising the procedures and techniques for analyzing a foreign language text from the point of view of different culturological, gender, discursive, ethnolinguistic and other approaches comes to the fore.

The Aim of the research is to identify the features of working on literary text in a humanitarian-oriented English course and to develop a methodological system for using effective text learning techniques for text analysis.

The Objectives of the research:

- To study linguistic, literary and methodological literature on the use of literary texts for educational purposes.
- Introduce the latest pedagogical, telecommunicative teaching technologies for the analysis of professionally oriented texts.
- Develop a methodological system that can contribute to the formation of text analysis skills in the process of developing communicative competence.

The content of the study is reflected in the structure of the dissertation, which consists of an introduction, two chapters, conclusion, bibliography and appendices.

The scientific novelty of the study.

1. it reveals the features of teaching the analysis of a literary text at the linguistic and literary levels;

2. it analyzes and classifies the person-oriented learning, game, communicative, module technologies, as well as technologies of translation and analysis of a text, determines the pedagogical conditions and procedures to apply them taking into account the peculiarities of English for Philological Purposes course;

3 . It develops a methodological system for using text to teach analysis using new training technologies.

The theoretical significance of the study:

It studies and systematizes the basic theories of analysis and teaching to analyze a text, determines the goals and objectives of English for the Humanities courses, creates a methodological system for teaching and analyzing professionally oriented texts.

The practical significance of the study:

It works out a system of exercises, aimed at teaching to analyze a literary text, develops the criteria for analyzing and evaluating professionally-oriented texts, textbooks that can help to organize new English language courses, create new teaching and learning programs, plans for conducting lessons.

The content and volume of the research: The dissertation consists of an introduction, two chapters, conclusion, bibliography and appendices. The main content of the dissertation is set out on 150 pages.

Six scientific articles were published on the topic of the dissertation

A handwritten signature in black ink, appearing to read 'R. Steiner'.

